

**ՁԵՈՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՈՒՍԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ**

ԱՌԱՔԵԼՅԱՆ ՎԱԼԵՐԻ

Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ

ԵՊՀ, ԳՊՀ դասախոս

Էլիոստ՝ valeriaragelyan@ysu.am

ՀՈՒՍԻԿՅԱՆ ԴԱՎԻԹ

Տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ,

ՀԱՊՀ

Էլիոստ՝ dhusikyan@seua.am

ՎԱՐԴԱՆՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ԵՊՀ կառավարման և գործարարության ամբիոնի հայցորդ

Էլիոստ՝ vardanyan717@gmail.com

Շուկայական հարաբերությունների պայմաններում արտաքին միջավայրի գործոնների ազդեցության հետևանքով ձեռնարկատիրական գործունեությունը միշտ էլ, որ բավարարում է իր գործունեության արդյունքներով, քանի որ ձեռնարկատիրական ոլիսկերի առաջացման պայմանում տնտեսվարող սուբյեկտն ունենում է տարբեր տեսակի կորուստներ, որի պայմանում այն կարող է գտնվել ֆինանսական անկայուն վիճակում: Այս հիմնախնդրի լուծման նպատակով հողվածում քննվել են ձեռնարկատիրական գործունեության անբավարարվածության ոլիսկի առաջացման պայմանները և փորձ է կատարվել տնտեսամաթեմատիկական մոդելի միջոցով ձեռնարկատիրական ոլիսկերը հասցնել նվազագույնի, որի արդյունքում տնտեսվարող սուբյեկտը կարող է գտնվել ֆինանսական կայուն վիճակում:

Բանալի բառերը՝ շուկա, ձեռնարկատիրություն, միջավայր, գործոններ, գործունեություն, ոլիսկեր, անբավարարվածություն, ֆինանսական ապահովություն, մոդել, կառավարման որոշումներ, որակական և քանակական գնահատում:

Շուկայական հարաբերությունների պայմաններում արտաքին միջավայրի գործոնների ազդեցության հետևանքով միշտ էլ, որ երաշխավորվում է շահույթի կայուն մակարդակ, քանի որ ցանկացած տնտեսվարող սուբյեկտ, իրականացնելով որևէ տնտեսական գործունեություն, ոլիսկի է դիմում՝ վտանգելով ոչ միայն նյութական, այլև ֆինանսական միջոցները, հեղինակությունը: Ուստի սպասվելիք բացասական հետևանքները ակնկալվող դրական արդյունքների ապահովման նպատակով անհրաժեշտ է գնահատել

ոիսկերը և այն գործոնները, որոնց ազդեցությամբ ձևավորվում են ոիսկային իրավիճակները:

Ռիսկի ճանաչումը և վերլուծությունը ոիսկի կառավարման գործընթացի կարևորագույն փուլերից են: Դրանց ճշգրիտ և գիտականորեն հիմնավորված իրականացումից է կախված նաև հետագայում ընդունվելիք որոշումների արդյունավետությունը, հետևաբար նաև, թե կազմակերպվածությունը որքանով է պաշտպանված ոիսկերից:

Ռիսկերի ճանաչման և գնահատման գործընթացի հիմնական նպատակը լիարժեք պատկերացման ձևավորումն է, որը թույլ կտա ձեռներեցին ռացիոնալ որոշումներ կայացնել, սակայն ճանաչողության գործընթացը չի սահմանափակվում զուտ նկարագրական մակարդակով, քանի որ ձեռներեցը պետք է պատկերացում կազմի ոչ միայն հնարավոր ոիսկերի վերաբերյալ, այլև այն մասին, թե դրանք ինչ ազդեցություն կարող են ունենալ կազմակերպության գործունեության վրա ընդհանրապես: Հետևաբար սա հնարավորություն կտա նվազեցնելու անորոշության մակարդակը՝ բարձրացնելով որոշում կայացնելու արդյունավետությունը:

Ակնհայտ է, որ ոիսկերի ճանաչման և գնահատման գործընթացում սկզբում իրականացվում է ոիսկերի որակական, այնուհետև քանակական գնահատումը:

Հարկ է նշել, որ կառավարչական որոշումների կատարման արդյունավետությունը մեծ մասամբ կախված է նախնական քանակական գնահատման փուլի ճշգրտությունից, քանի որ եթե այս փուլում թույլ տրվեն որոշակի բացթողումներ, ապա անգամ հետագա փուլերում գործողությունների կատարման ճշգրիտ իրականացման դեպքում ցանկալի արդյունք ստանալ հնարավոր չէ, հետևաբար այս փուլում ամենայն լռությամբ հարկավոր է ուսումնասիրել տեղեկատվության աղբյուրներն ու տվյալների հավաստիությունը:

Ձեռնարկատիրական գործունեության ոիսկի առանձին տարրերի դրսևորումը կախված է ոիսկի աստիճանից, իսկ վերջինս պայմանավորված է տարբեր գործոնների հաշվառմամբ՝ ընդունված որոշումների բովանդակությամբ: Այդ տեսակետից որոշումները լինում են նվազագույն, միջին, բարձր և առավելագույն ոիսկերով:

Ձեռնարկատիրական ոիսկերի կառավարման արդյունավետ համակարգ ընտրելու և այդ ոիսկի նվազեցման նպատակային մեխանիզմ մշակելու համար անհրաժեշտ է քննարկել ձեռնարկատիրական ոիսկի գնահատման մեթոդների և մոտեցումների առանձնահատկությունները:

Ակնհայտ է, որ որոշումների ընդունման գործընթացն իրականացվում է անորոշության պայմաններում, երբ հնարավոր չէ տիրապետել մրցակիցների և գործընթացների վարքագծի, ընդհանուր քաղաքական և տնտեսա-

կան հնարավոր փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվության ամբողջ ծավալին: Սա է այն հիմնական պատճառներից մեկը, որ նախօրոք հնարավոր չէ կանխատեսել բոլոր վտանգները և հնարավոր ելքերը:

Ձեռնարկատիրական ռիսկի քանակական գնահատման համար գործնականում կիրառվում են տարբեր մեթոդներ: Ռիսկերի տեսության զարգացման հետ մեկտեղ զարգացել են նաև դրանք: Ի հայտ են եկել ռիսկերի վերլուծության և գնահատման մի շարք համեմատաբար նոր մեթոդներ՝ խաղերի տեսություն, ծախսերի նպատակահարմարության վերլուծություն, անալոզների օգտագործում, անալիտիկ, իրավիճակային, փորձագիտական և այլն: Այս բոլորը ենթադրում են համապատասխան գործառույթների մասին, ինչպես նաև տվյալ կամ նմանատիպ կազմակերպության (նախագծի) ֆինանսատնտեսական գործունեության արդյունքների մեխանիզմի մասին վիճակագրական տվյալների օգտագործում: Ռիսկերի քանակական մեթոդների բազմազանությունը պայմանավորում է գնահատման սանդղակի տարբերությունները, այդ պատճառով հիմնական վերլուծության համար անհրաժեշտ է օգտվել ևնույն ցուցանիշների համակարգից:

Սակայն այն պայմաններում, երբ ձեռնարկատիրական գործունեության մասին վիճակագրությունը բացակայում է, նախագծերը (գործարքները) կրում են եզակի բնույթ, տեղեկատվությունը ոչ ճիշտ (անորոշ), հավանականության և վիճակագրության մեթոդների կիրառության հնարավորությունը դառնում է սահմանափակ, իսկ հաճախ այն ընդհանրապես բացակայում է:

Ինչպես ցույց են տալիս հայրենական և արտասահմանյան հետազոտողների կողմից բազմաթիվ ուսումնասիրությունների արդյունքները, ձեռնարկատիրական գործունեության ընթացքում կարևոր խնդիրներից մեկն է առաջացող ռիսկերի քանակի որոշումը:

Հայտնի է, որ գործունեության բնույթից կախված՝ ռիսկերի քանակի ավելացումը խիստ պայմանավորված է ձեռնարկատիրական գործունեության քանակի աճով, որքանով ավելանում է ձեռնարկատիրական գործունեությունների քանակը γ , այնքանով աճում են ռիսկերը:

Եթե առաջին փուլում ռիսկերի քանակը նշանակենք N_i -ով, որոնք կարող են առաջանալ գործունեության ընթացքում, իսկ երկրորդում այդ գործոնների քանակը, որոնք առաջանում են գործընթացներ իրականացնելիս γ_1 : Սակայն անկախ այն բանից, թե ինչ քանակով են առաջացել ռիսկերը N_i -ը, միշտ անհրաժեշտ է հաշվի առնել դրանց վրա ազդող գործոնների համախումբը:

Խնդիրն այն է, որ N_i քանակի և ազդող գործոնների միջին $\gamma(N)$ թիվը պատահական մեծություն է: Սա նշանակում է, որի ռիսկի քանակը պայմանավորված է ռիսկի առաջացման տարբեր գործոնների ազդեցությամբ: Հետևաբար այն դեպքում, երբ N_i ռիսկի քանակի համար պահանջող γ գործոնների քանակը ավելի մեծ կլինի, քան եթե գումարեն ձեռնարկատիրական գործունեության ընթացքում առաջացող ռիսկերի վրա ազդող գործոնների N_i թիվը, քանի որ գործունեության բնույթից կախված ոչ բոլոր տնտեսական ռիսկերը կարող են առաջանալ¹:

Այդպիսով ձեռնարկատիրական գործունեության անբավարարվածության² հավանականությունը կարելի է ներկայացնել որպես այն բանի հավանականություն, որ ռիսկի N_i -ի համար պահանջվող գործոնների քանակը կլինի ոչ ավելի, քան տվյալ պահին առաջացող ռիսկի վրա ազդող գործոնների քանակի γ_i :

$$P_{\gamma} = P[\gamma(N_i) \leq \gamma_i] = P(N_{\text{միջ}} = N_c)^2 : \quad (1)$$

Արտահայտելով այդ հավանականությունը՝ ռիսկի N_i քանակի պահանջվող գործոնների ազդեցությամբ կունենանք[1,2]

$$P_{\gamma} = P[\gamma(N_i) \leq \gamma_i] = P_{\gamma} = \int_0^{\gamma_i} f(\gamma, N_i) d\gamma = \frac{1}{\sqrt{2\pi\sigma}} \int_0^{\gamma_i} e^{-(\gamma-\bar{\gamma})^2/2\sigma} d\gamma : \quad (2)$$

Ինչպես երևում է (1)-ից և (2)-ից, որքան մեծ է ազդող գործոնների քանակը, այնքան ավելի ճշգրիտ է որոշվում նրանց անբավարարության ռիսկը, հետևաբար այնքան էլ մեծ է բոլոր ռիսկերի առաջացման հավանականությունը: Որպեսզի ձեռնարկատիրական ռիսկը հասցնենք նվազագույնի, անհրաժեշտ է անբավարարության ռիսկը հասցնել զրոյի:

Համաձայն ձեռնարկատիրական գործունեության վրա ազդող գործոնների γ թվի N քանակից կախվածության հավանականության մոդելի $\gamma(N_i)$ -ն ու-

¹ St'u Хомкалов Г. В., Риски из инвестирования: анализ и оценка.

Хамкалов Ф. В., Панкратева Е. А., М. Во обл. И проф. Образования Рос. Федерации, Иркут, Гос. жан, Акад., Иркутск, Изд.-во ИИ III.

² Ձեռնարկատիրական գործունեության անբավարարվածություն ասելով պետք է հասկանալ այն իրավիճակը, երբ ռիսկերի առաջացման ծնորհիվ մեծանում է կորուստները և տնտեսվարող սուբյեկտը գտնվում է ֆինանսական անկայուն վիճակում:

նի հավանականությունների նորմալ բաշխում: Դա նշանակում է, որ ցանկացած γ_i վերջավոր արժեքի համար (2)-ի և (3)-ի համաձայն՝

$$P_\gamma < 1, R > 0$$

Սակայն հայտնի է, որ ցանկացած նորմալ բաշխման N_i պատահական մեծությունների համար, որոնց մաթեմատիկական սպասումը γ է, ստանդարտ շեղումը σ_γ , տոկոսի տասնորդական մասի ճշտությամբ, իրացվելի են հետևյալ արտահայտությունները, համաձայն [1], որ նորմալ բաշխման պատահական մեծությունը՝

$$\begin{cases} F(\bar{\gamma} + \sigma_\gamma) = 0.84 \\ F(\bar{\gamma} + 2\sigma_\gamma) = 0.98 \\ F(\bar{\gamma} + 3\sigma_\gamma) = 0.997, \end{cases} \begin{cases} \gamma(P_\gamma = 0.997) = \bar{\gamma} + 3\sigma_\gamma \\ \gamma(P_\gamma = 0.98) = \bar{\gamma} + 2\sigma_\gamma \\ \gamma(P_\gamma = 0.84) = \bar{\gamma} + \sigma_\gamma, \end{cases} \quad (4)$$

որտեղ F -ը բաշխման ֆունկցիան է, $\bar{\gamma}$ և σ_γ համապատասխանաբար N_i ռիսկի վրա ազդող գործոնների միջին արժեքներն են ու ստանդարտ շեղումները:

Ինչպես հետևում է (4)-ից՝

$$\gamma_i(R=0) = \bar{\gamma}(N) + 3\sigma_\gamma: (5)$$

Այս դեպքում ապահովվում է ձեռնարկատիրական գործունեության անբավարարության գրոյական ռիսկը: Հետևաբար $\gamma_i(R=0) = \bar{\gamma}(N) + 3\sigma_\gamma$ -ից մեծ լինելու հավանականությունը գործնականորեն հավասար է զրոյի:

Ակնհայտ է, որ առանց նկատելի կորուստի կարելի է նվազեցնել ազդող գործոնների թիվը շեղման մեծության չափով: Ընդ որում (5)-ի համաձայն՝ ռիսկի քանակի ավելացումը կանգնեցնում է կորուստների չափի ավելացմանը:

Այսպիսով, կարելի է ներկայացնել ռիսկի առաջացման և ազդող գործոնների քանակի հետևյալ սկզբունքը՝

$$\gamma_i = \bar{\gamma}(N_i) + (2 \div 3)\sigma_\gamma$$

որտեղ $\bar{\gamma}(N_i)$ -ը N_i ռիսկի վրա ազդող գործոնների միջին արժեքն է, σ_γ գործոնների ազդեցության ստանդարտ շեղումն է:

Ինչպես կարելի է նկատել, նման ընտրության դեպքում դրանց անբավարարության ռիսկը կազմում է $R=0,02$ և գործնականում N_i -ի ռիսկի առաջացման դեպքում՝ կորուստների նվազագույն մեծություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Хомкалов Г. В., Риски в инвестировании: анализ и оценка
2. Хамкалов Ф. В., Панкратева Е. А., М. Во общ. И проф. Образования Рос. Федерации, Иркут Гос жан. Акад., Иркутск, Изд.-во ИГШ
3. Вентцель Е. С., Теория вероятностей, М. , Наука, 1962, 574 С.
4. Двайт Г. Б., Таблицы интегралов и дугие математические формулы, М. , Наука, 1978. 224 С.

ASSESSMENT OF THE RISK OF FAILURE OF ENTREPRENEURIAL ACTIVITY

ARAKELYAN VELERI

PhD in Economics, Associate Professor

YSU, GSU Lecturer

e-mail: valeriaragelyan@ysu.am

HUSIKYAN DAVID

PhD in Engineering

e-mail: dhusikyan@seua.am

VARDANYAN SARGIS

Researcher at the Department of Management and Entrepreneurship, YSU

e-mail: vardanyan717@gmail.com

In market conditions, as a result of the influence of environmental factors, entrepreneurial activity does not always satisfy with its results since, due to business risks, an economic entity has different types of losses, finally resulting in an unstable financial position. To solve this issue, the article examines the causes of the risk of failure of entrepreneurial activity and makes an attempt to minimize business risks using an economic and mathematical model, as a result of which an economic entity may be in a financially stable position.

Key words: market, entrepreneurship, environment, factors, activity, risks, failure, financial security, model, managerial decisions, qualitative and quantitative assessment.

ОЦЕНКА РИСКА НЕДОСТАТОЧНОСТИ В ПРЕДПРИНИМАТЕЛЬСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

АРАКЕЛЯН ВАЛЕРИЙ

Кандидат экономических наук, доцент,

Преподаватель ЕГУ, ГГУ

электронная почта: valeriaragelyan@ysu.am

УСИКЯН ДАВИД

Кандидат технических наук, доцент

электронная почта: dhusikyan@seua.am

ВАРДАНИЯН САРГИС

Соискатель кафедры управления и предпринимательства ЕГУ,

электронная почта: vardanyan717@gmail.com

В условиях рыночных отношений, вследствие влияния факторов внешней среды предпринимательская деятельность не всегда удовлетворяет результатами своей деятельности, поскольку из-за бизнес-рисков хозяйствующий субъект несёт различные потери, из-за которых он может находиться в нестабильном финансовом положении. Для решения данной проблемы в статье рассматриваются причины возникновения риска недостаточности в предпринимательской деятельности и делается попытка минимизировать бизнес-риски с помощью экономико-математической модели, в результате чего хозяйствующий субъект может находиться в финансово стабильном положении.

Ключевые слова: рынок, предпринимательство, среда, факторы, деятельность, риски, недостаточность, финансовая безопасность, модель, управленческие решения, качественная и количественная оценка.

Հոդվածը ներկայացվել է խմբագրական խորհուրդ 27.08.2021թ.:

Հոդվածը գրախոսվել է 07.11.2021թ.: